

Թոմաս-որոշիւն խառնաշուկ: — Երբ որպիսի և իցէ մի Թոյն մտանէ ի ստամոքսն, առաջին առնելին այս է, գրգռել զփստումն կամ ըմպել տալով 5 կամ 6 հարիւրազրամ մաղձաղեղ կամ արբուցանելով զաղջ ջուր, կամ խտողեցուցանել զորկորն փեարով, որով փախի հիւանդն: Եւ յետ այնորիկ պարտաւորի հիւանդն կարճել բժշկութեան անտեղեակ անձանց խնամատարութիւնը, քանզի նորա երբէք ոչ ճանաչին խառնեալ նիւթից բնութիւնն: Երբ Թոյնն ծանօթ է, ահա նորա անգեղացն (փաղէհիբը)՝ զոր կարելի է տալ ըմպել՝ սպասելով բրձկութեան: Զոր մէք դասաւորած և մք նոցա հարկաւորեալ կանոնաց մէջ, պէտք չէ մոռանալ երբեմն թէ կայ կատարելապէս ազդու դեղԹափ, որ կարէ բոլորովին արդելով Թունից աղբիցութիւնն: Աւերջապէս պէտք չէ շուտով բժշկի երթեւեկութիւնն դադարեցնել, որոյ ներկայութիւնն միշտ օգտակար է խնամքներն կարգաւորապէս զործադրելու, և շատ կարևոր է ստոյգ օգնութիւններ տալու համար, որք իսկապէս վերաբերին ախտացելոց վիճակի առողջութեանը, որպէս և երակահատու թիւնն:

Թոմաս-որոշիւն փոխեցոյցանել: — Երբ որ մի մարդ կերած է Թունաւոր սունկն, անմիջապէս պէտք է տալ նորան 60 գրամ գերչակի ձէթ, մի մաքրողական դեղ գրեխով, յետոյ նարնջի ծաղկանց ջուր, որոյ 125 գրամի հետ պարտ է բաղադրել 8 գրամ ether, որ է ցնդական և ողելից հեղուկ արտադրեալ Թթուածին աղից արաղով: Եյս խառնուրդն պէտք է ըմպել մի մի լի դրկալ 5 րոպէ միջոց տա-

լով: Բայց եթէ չգտանի նարնջի ծաղկան ջուր և միւս հեղուկն, քացախով կամ կիտրոնի նիւթով սաստիկ Թթուացրած ջուր ապա ըմպել: Եւ զորից յիշատակաւ

Թ. 5. Պարմալան Զրափել: Պարմալանիւն: Բժշկականութեան ամենայն մասանց առաջինն է առողջապահական կանոնքն, որ նախնեաց ժամանակին կայր, և արդեամբ ևս գրեթէ մենք ոչինչ չենք աւելացրել այն առողջապահական կանոնաց վերայ, զոր նախնեաց քննիչ ողբն աւանդեալ է նոցա այս նկատողութեամբ:

Ազիպատական պատմութիւն, Մովսէս և Քալէնոփոն տան մեզ գիտել թէ՛ առողջապահական պատմութիւնն եղած էին ճիշտ օրէնք, և դարձած կրօնական սովորութիւն իմաստուն օրինադրաց ձեռք: Երեւելայց սցս առողջապահական հին կանոնքն պահպանուած էին հին օրինաց մէջ, զոր Մուհամմէտ տուեալ է արդի աւելելայց:

Հիպոկրատեայ մատնագրութեանց մէջ կարելի է գտանել առաջին անգամ այն առողջապահական կանոնքն վերածեալ առ սկզբնականութիւն, և բժշկականապէս քննեալ: Պլուտարքոս և Օլուսէէ ևս թէպէտ սոյն իսկ առարկայի վերայ գրած են, բայց Վաղղիան մի ամենամեծ քայլ ունեցաւ բժշկականութեան այս մասի մէջ, և այսօր մեր մէջ զործադրելիք առողջապահական կանոնքն նորա են՝ որ ամենայն մասամբ գերազանց քան զամենայն: Աւշտասանիբորդ դարուն մէջ Սալոնէի ուսումնարանն հրատարակեց առ Լատին նացիս մի առողջապահական ճառ, որոյ բազմաթիւ վճիռներն ընդհանրացած են այսօր: Երդի գիտութեանց զեւտք ներկն

նուազ փորձառութեամբ ուսանել առողջապահական կանոնն: Մեր դարու սկզբան Հալէ մեծ վարժապետն բռնադատուած էր փորձով հաստատել այն դիտութեան սկզբունքն՝ որում շատ պարտաւոր է:

Ինարլեծութեան յառաջադիմութիւնքն՝ լուծման հնարքն կատարելագործելով ներքն յուսալ, թէ պիտի գայ այնպիսի մի օր՝ որ պիտի տեսանեն հաստատութեամբ օգագնացութիւն և մինչև յաւուրս մեր անիմանալի կերպիւ փաստար ճանաչուած հեղուկաց սկզբունքն, և այսպիսի մի արդիւնք անշուշտ պիտի շատ առողջապահական ծանօթութիւնս տան, որ է անբաւ բարեբարութիւն մարդկութեան:

Թարգմանեալ է Գրգէրէնէ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԳԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ:

Տ Ա Ր Ա Վ Ո Յ Ս .

Շատ և բաւական են թիւք այն ազգասեր ուսումնականաց՝ որք զանազան հնարներ են մտածում մեր Ազգի լիզուի մշակութեան համար, և ամենեցուն ծիլն այն է՝ որ համանգամայն յաջողեն տարրացնել Ազգի ամենայն դասակարգի մէջ զպրութեան սերը և ամենեցուն դիւրամտոյց առնել ընթերցանութեան միջոցները: Բայց զիս չերեցաւ մէկ այնպիսի անձն՝ որ խնդիր յարուցանէր թէ արդեօք ի՞նչ հնար կայ, որ Հայերէն երեսուն և վեց կամ ինն տառերը, այն է Հայոց Այրուրենիք՝ ընդ ամենայն տեղիս, ուր միանգամ ցրուած են մեր համազգիք, միօրինակ հնչիւն ունենան, այս ինքն՝ մի և նոյն տառերը մի և նոյն ձայնը հանեն ամենայն տեղ:

Գիտական Բերորէ Պատկանեան՝ որ մեր լիզուի ծագման և կազմութեան վերայ նրբազնին հետազոտութեամբ աշխատասիրեց, և նորա ան-

թափանցելի մթութեան վերայ նոր լոյս սփռելով՝ և այս առարկայի մէջ ևս աւագազոյն տեղին սեփականեց, թէպէտ և նորա սրբիւ տեսութենէն այս մասնաւոր փոքրիկ պարագայն ևս չմնաց ծածկեալ, բայց ինչպէս երևում է, կարծեց՝ թէ սորա համար պիտացաւ կրկոյ զիս ևս ժամանակն չէ հասել:

Այլ ինձ առանձին հարկաւորութիւն հանդիպեցաւ՝ որ այս նիւթոյ վերայ դրաւոր մտածութիւն անեմ, և իմ Տարակոյտա հրատարակեմ Արարատ ազգապարծանք հանդիսից միջնորդութեամբ, և հայցեմ ամենայն ձեռնհաս ուսումնական մերազնէից, որ ըստ իւրաքանչիւր կարծեաց՝ այս տարակուսանաց լուծումն շնորհել բարեհաճին, որովհետեւ այս՝ իմ անձնական գործ չէ, այլ՝ ազգային բիւրատեսակ խնդրոց մէկն է, և այն բաւական զոգարիկ խնդրոց, և չէ արժան այսպիսի խնդիրն թողուլ ի զանգառութեան և թող տալ, որ իւրաքանչիւր որ ըստ քմաց լիզուի օրէնսդիր նստի, և իւր կարծիքն՝ կամապաշտութեամբ աստուածացուցանէ, ըստ որում՝ հասարակեալ առած է, թէ ամենայն ոք սիրէ զիւր կարծիս՝ որպէս զիւր ծնունդս:

Ընդ ամենայն՝ երեսուն և ինն տառեր են մեր Այրուրենիք, և ո՛չ աւելի: Զինաց տառերի նման հարիւրաւոր չեն. սեպագրաց և բեւեռագրաց նման հազարամէից հնութեանց մատախուղներով և բիւրակերպեան կամայական դասաւորութեանց պայմաններով ազատացած չեն: Եզրպտայր ոչանագրաց նման քրմածին հնարների գաղտնեօք քօղարկած չեն: Ար միանգամ գէթ փոքր ինչ սովորել է Հայերէն ընթեռնուլ կամ գրել, նա արդէն գիտէ՝ որ Այրն՝ ա է, Բենն՝ բ է, Գիմն՝ գ է, Դան՝ դ է: Բայց բերանէն արտասանելոյ ժամանակն՝ Էջմիածնի գաւառակից կամ մերձակայ Արարատեան ծագաց Հայն՝ այլ կերպ է հնչում: Աստրախանայ և Ղզլարայ և Շամախու և Բագուայ Հայն՝ այլ կերպ: Պօսեցին, Զմիւռնացին, Վարնեցին, Տարոնեցին, Թրակացին, Մակեդոնացի, Եզրպտացի և Տաւրիկեցի Հայն՝ այլ կերպ: Տիֆլիսեցին, Տայոց և Գուգարաց Հայն՝ այլ կերպ: Եւստուկ անուանց մէջ՝ այլ կերպ, ընդհանուր անուանց մէջ՝ այլ կերպ, և այս իսկ այլակեր-